Կարգապահական գործ թիվ 16224

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի դեկտեմբերի 06-ի թիվ 190-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/117-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿՐՈՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Սարդարյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Կրոմվել Գրիգորյանին (արտոնագիր՝ 305) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

30.11.2016թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող)** դատավոր Արմեն Խաչատրյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 25.11.2016թ. որոշումը **(այսուհետ՝ Որոշում)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործի քննության ընթացքում պաշտպան Կրոմվել Գրիգորյանը դատարանի հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցնելու միջոցով անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ:

Որոշմամբ նշվել է, որ թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործով 25.11.2016թ. նշանակված դատական նիստին հարցաքննվող վկայի ցուցմունքից գրառում կատարելու ժամանակ նախագահող դատավորը դահլիճում գտնվող անձի (անձանց) կողմից ցածրաձայն եկող անհասկանալի աղմուկ՝ «փսփսոցի կամ բրթբրթոցի» ձայներ, լսելուց հետո ըստ էության ընդհանուր դիտողություն է արել ասելով՝ *«ձայներ եմ լսում, բրթբրթոց չլսեմ»*:

Ըստ Որոշման՝ նախագահողի նշված խոսքն ընդհատվել է պաշտպան Կրոմվել Գրիգորյանի կողմից, և վերջինս հայտարարել է, որ առարկում է նախագահողի անօրինական հայտարարության դեմ, միաժամանակ ասելով, որ *«մրթմրթոցը նախագահողինն է, ես ձեն չեմ հանել, ինչ մրթմրթոցի մասին է խոսքը»*:

Որոշմամբ նշվել է, որ նախագահողը պարզաբանել է, որ խոսքը պաշտպանի մասին չէ, որից հետո պաշտպան Կրոմվել Գրիգորյանը, տոնայնությունը բարձրացնելով, բղավելով հայտարարել է. ***«խոսում եք, մռթմռթոց, մռթմռթոցը ձերն ա, իա, էս ինչ ձևա խոսելու պաշտպանի հետ, ինձ եք նայում խոսում եք, ասում եք մռթմռթոց չլսեմ, դուք նայեցիք ես բան էի խոսում, դուք մռթմռթում եք ինձ ասում»***:

Դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածով նախատեսված իրավական նորմերը, գտել է, որ Կրոմվել Գրիգորյանը դատարանի հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցնելու միջոցով անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ:

Դատարանը 25.11.2016թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. *«Թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործով ամբաստանյալ Դավիթ Ներսեսյանի պաշտպան Կրոմվել Գրիգորյանի (ՀՀ փաստաբանների պալատի անդամ, արտոնագիր թիվ 305) նկատմամբ կիրառել դատական սանկցիա և վերջինիս պատասխանատվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատին»:*

Դիմումին կից ներկայացվել ի թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործով 25.11.2016թ. դատական նիստի ձայնագրառման կրիչը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 16.12.2016թ. թիվ 494-Ա/ԿԳ-16224 որոշման հիման վրա փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

20.12.2017 թվականին արգապահական գործը հանձնվել է նախապատրաստող փաստաբան Ռուբեն Բալոյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Կարգապահական գործի քննությանը Դիմողը չի մասնակցել՝ չնայած դրա ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված լինելու հանգամանքին և այլ դիրքորոշում, քան Որոշմամբ արտահայտվածն է, չի ներկայացրել:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

06.02.2017 թվականին նախապատրաստողին ներկայացված բացատրությամբ պատասխանողը նշել է, որ Որոշմամբ կատարված հետևություններն անհիմն են, քանի որ

25.11.2016թ. տեղի ունեցած դատական նիստի ձայնագրությամբ հիմնավորվում է, որ ոչ թե պաշտպան Կրոմվել Գրիգորյանի կողմից է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորել, այլ դատավոր Արմեն Խաչատրյանն է վկայի հարցաքննության ժամանակ, նայելով պաշտպան Կրոմվել Գրիգորյանին, վիրավորել՝ ասելով՝ մրթմրթոց չլսեմ, իսկ փասևտաբանը, առարկելով նախագահող դատավորի անօրինական գործողությունների դեմ, հայտարարել է, որ նախագահող դատավորն է մրթմրթում, այլ ոչ թե պաշտպան Կրոմվել Գրիգորյանը, որից հետո նախագահող դատավորը հեռացել է խորհրդակցական սենյակ և վերադառնալուց հետո հրապարակել վիճարկվող որոշումը:

Դատարանի որոշման պատճառաբանություններն իրականությանը չեն համապատասխանում, նախագահող դատավորն իրավական հիմքեր չի ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով ղեկավարվելու և պաշտպան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին որոշում կայացնելու, քանի որ ինքն իր դատավարական իրավունքներից օգտվել է բարեխղճորեն, դատավարական պարտականությունները կատարել է հարգալից և պատշաճ, կատարել է դատավորի բոլոր օրինական կարգադրությունները, դատական նիստի բնականոն ընթացքը չի խոչընդոտել կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք չի դրսևորել: Հետևաբար, փաստաբան Կրոմվել Գրիգորյանի արարքներում առկա չէ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտում և գտել է, որ այդ հիմքով պետք է կարգապահական վարույթը կարճվի:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 17.02.2017թ. կազմել է եզրակացություն, որում, հանգել է հետևության, որ նախագահող դատավորի խոսքից հետո փաստաբան Կրոմվել Գրիգորյանի կողմից դատարանի, նախագահող դատավորի հասցեին արվել է «մռթմռթալ» արտահայտությունը: Նախապատրաստողը նշել է, որ եթե նախագահող դատավորը նշված արտահայտությունն ուղղել է անորոշ անձանց շրջանակին (մռթմռթոցներ), ապա փաստաբանի արված արտահայտությունն ուղղված է եղել կոնկրետ նախագահողին, ուստի խորհուրդը պետք է գնահատական տա և որոշի, թե նշված արտահայտությունն անելով փաստաբանը դատարանի հասցեին անհարգալից վերաբերմունք դրսևորել է, թե՝ ոչ: Միաժամանակ, նախապատրաստողը նշել է, որ անընդունելի է նման տոնայնությամբ բղավելով՝ դատարանին դիմելը: Արդյունքում, նախապատրաստողը եզրակացրել է, որ պատասխանող Կրոմվել Գրիգորյանի արարքում Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշների առկայության փաստը կհաստատվի, եթե Խորհուրդը կորոշի, որ

«դատարանն է մոթմոթում» արտահայտությունն անելով՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանը դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք:

Պատասխանողը ներկայացրել է առարկություն՝ նախապատրաստողի կազմած եզրակացության վերաբերյալ՝ ըստ էության հայտնելով, որ նախապատրաստողի հետևություններն իրականությանը չեն համապատասխանում, դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, իսկ իր արարքում Կանոնագրքի 4.1-րդ կետով նախատեսված արարքի հատկանիշները բացակայում են:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 20.02.2017թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 06.12.2017[1] թվականին ժամը 19:00-ին՝ Պալատի վարչական շենքում՝ ք.Երևան, Զաքիյան 7-2:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործով 25.11.2016թ դատական նիստի ժամանակ նախագահող դատավորը դահլիճում հայտարարել է. *«Ձայներ եմ լսում, բրթբրթոց չլսեմ»*:
- Նախագահողի նշված խոսքն ընդհատվել է պաշտպան Կրոմվել Գրիգորյանի կողմից, և վերջինս հայտարարել է, որ առարկում է նախագահողի անօրինական հայտարարության դեմ, միաժամանակ ասելով, որ ***«Մրթմրթոցը նախագահողինն է, ես ձեն չեմ հանել, ինչ մրթմրթոցի մասին է խոսքը»:***
- Նախագահողը պարզաբանել է, որ խոսքը պաշտպանի մասին չէ, որից հետո պաշտպան Կրոմվել Գրիգորյանը ձայնի տոնայնությունը բարձրացնելով, բղավելով հայտարարել է՝ ***«Խոսում եք, մոթմոթոց, մոթմոթոցը ձերն ա, իա էս ինչ ձևա խոսելու պաշտպանի հետ, ինձ եք նայում խոսում եք, ասում եք մոթմոթոց չլսեմ, դուք նայեցիք ես բան էի խոսում, դուք մոթմոթում եք ինձ ասում»***:

Սույն փաստերը հաստատվում են գործում առկա փաստաթղթերով, այդ թվում՝ դատական սանկցիա կիրառելու մասին 25.11.2016թ. որոշմամբ, թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործով 25.11.2016թ. դատական նիստի ձայնագրառման էլեկտրոնային կրիչով:

---

[1] Սույն կարգապահական գործի վարույթը կասեցվել է 27.4.2017թ՝ հաշվի առնելով-------: Գործի քննությունը վերսկսվել է 26.09.2017թ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Համաձայն գործում առկա ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 1997 թվականի նոյեմբերի 03-ին և նրա նկատմամբ՝ 2006-2017թթ ժամանակահատվածում 19 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որից 15-ը կարճվել են, երկու վարույթով փաստաբանի նկատմամբ կիրառվել է նկատողություն, և մեկ վարույթով տրվել է խիստ նկատողություն (տույժերը մարված են): Առկա է մեկ ընթացիկ վարույթ:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Կրոմվել Գրիգորյանը թույլ է տվել Կանոնագրքի 4.1 կետի խախտում հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է՝ դատական նիստում պահպանել կարգուկանոն:*

Վերոգրյալի համատեքստում Պալատի խորհուրդը հարկ է համարում պատասխանել հետևյալ հարցադրմանը.

- Արդյո՞ք Պատասխանողը թիվ ԵԱԴԴ/0072/01/14 քրեական գործով 25.11.2016 թվականի դատական նիստում չի պահպանել կարգուկանոն՝ դրանով իսկ անհարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի նկատմամբ:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող

անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Հետևաբար, փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները: Սույն դատողությունն արտացոլված է նաև Կանոնագրքի դրույթներում: Մասնավորապես, Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով հստակորեն սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ՝ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Կանոնագրքի 4.1 կետին, որը նախատեսում է դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին ենթարկվելու, այդ թվում՝ դատավորին հարգանքով վերաբերվելու պարտականություն:

Փաստաբանի վարքագիծը, որը խախտում է Կանոնագրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքինշված կանոնները, կասկածի տակ է դնում սեփական պարտականությունների նկատմամբ փաստաբանի ընդհանուր բարեխղճությունը, քանի որ փաստաբանի պարտականությունները չեն սահմանափակվում միայն իր վստահորդի հանձնարարության կատարմամբ, այլ ընդգրկում են տարաբնույթ այլ պարտականություններ, այդ թվում՝ դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին ենթարկվելու, դատարանի նկատմամբ հարգանք դրսևորելու, դատավորին հարգանքով վերաբերվելու պարտականություն:

Ավելին՝ Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:*

Սույն դրույթը վկայում է այն մասին, որ կշեռքի մի նժարին դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության

և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս: Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության (այդ թվում՝ փաստաբանական համայնքի) համար:

Կանոնագրքի 4.1 ենթակետի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոգրյալ դրույթների համադրված վերլուծությամբ փաստվում է, որ դատարանում գործող վարվելակերպի կանոնները, տվյալ դեպքում քրեական գործերով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում գործող դատավարական կարգը ներառում են դատավարության մասնակիցների և այդ թվում փաստաբանների կողմից դատավորի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորում:

Դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքը հանդիսանում է դատավարության բոլոր կողմերի, այդ թվում պաշտպանների հիմնարար պարտականություններից մեկը: Ընդ որում, փաստաբաններն այս հարցում ունեն առանձնահատուկ հանձնառություն, քանի որ կոչված են նպաստել արդարադատության իրականացմանը և հանդիսանում են միջնորդ հասարակության և դատական իշխանության միջև:

Դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքը չի նշանակում փաստաբանի կողմից իր վստահորդների շահերը պաշտպանելիս դատարանի հետ շփումներում կաշկանդվածություն կամ դատարանի համակրանքը շահելու գործողությունների իրականացում՝ ի վնաս իր վստահորդի շահերի: Կանոնագրքի 4.1 կետի երկրորդ նախադասությամբ փաստվում է, որ դատարանում գործող վարվելակերպի կանոններին ենթարկվելու փաստաբանի պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:

Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Միևնույն ժամանակ վստահորդի շահերի պաշտպանությունը չի կարող իրականացվել Կանոնագրքին հակասող կամ Կանոնագրքի դրույթները խախտող եղանակներով և միջոցներով,Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:*

Պալատի խորհուրդը գտնում է, որ դատարանի և դատավորի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու պարտականությունը նախատեսված է Կանոնագրքով, ուստի՝ չի կարող իրավաչափ համարվել դատարանի կամ դատավորի նկատմամբ անհարգալից

վերաբերմունք ցուցաբերելը՝ նույնիսկ վստահորդի շահերի պաշտպանության նպատակադրմամբ: Նմանապես, վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալը չի կարող պատրվակ հանդիսանալ դատարանի հետ հարաբերություններում ոչ իրավաչափ վերաբերմունք ցույց տալու համար:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Պալատի խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյոք դատավորի անձի նկատմամբ ցուցաբերվող առերևույթ անհարգալից վերաբերմունքը վերագրելի է դատարանին:

ՀՀ Սահմանադրության, ՀՀ դատական օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանի գործառույթները դատարանի անունից իրականացնում են դատավորները, ովքեր ի պաշտոնե ներկայացնում են Հայաստանի Հանրապետությունը:

Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝*Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:*

Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի շարադրանքից հետևում է, որ դատարանի՝ արդարադատություն իրականացնելու սահմանադրական գործառույթն իրականացնում են դատավորները. *արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:*

ՀՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ *դատարաններն արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքներին համապատասխան:*

Նույն օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ *արդարադատություն և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորն անկախ է*:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ ակնհայտ է, որ դատավորի կողմից իր պաշտոնեական լիազորություններն իրացնելիս և դրանց կապակցությամբ նրան գրավոր կամ բանավոր կամ որևէ այլ կերպ հասցեագրված անիրավաչափ կամ անհարգալից վերաբերմունքը վերագրվում է նաև դատարանին:

Տվյալ պարագայում Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ թիվ ԵԷԴ/0072/01/14 քրեական գործով 25.11.2016 թվականի դատական նիստի ընթացքում պաշտպան Կրոմվել Գրիգորյանը դատարանի նկատմամբ կատարել է անհարգալից արտահայտություններ՝ նշելով ***«Խոսում եք, մոթմոթոց, մոթմոթոցը ձերն ա, իա էս ինչ ձևա խոսելու պաշտպանի հետ, ինձ եք նայում խոսում եք, ասում եք մոթմոթոց չլսեմ, դուք նայեցիք ես բան էի խոսում, դուք մոթմոթում եք ինձ ասում»:***

Խորհուրդն արձանագրում է, որ դատական նիստի ձայնագրությունից հետևում է, որ փաստաբանի խոսքը հնչում է կոպիտ հնչերանգով, բարձր տոնայնությամբ և ուժգին ձայնով, որպիսի պայմաններում փաստաբանի նման վարքագիծն օբյեկտիվորեն ունի դատավորի հեղինակությունն ու արժանապատվությունը նվաստացնող բովանդակություն: Նման վարքագիծ դրսևորելով՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանն ըստ էության ՝ դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք:

Խորհուրդը գտնում է, որ նման վարքագիծը որևէ կերպ պայմանավորված չի եղել պաշտպանի՝ որպես դատավարության մասնակցի իրավունքներով, ուղղված չի եղել

օրենքով չարգելված միջոցներով իր վստահորդի շահերի պաշտպանությանը և որևէ կերպ հիմք չի տալիս ենթադրելու փաստաբանի կողմից օրենքով սահմանված կարգով նախագահող դատավորի գործողությունների դեմ առարկելու վարքագիծ դրսևորած լինելու մասին:

Վերոշարադրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից չեն պահպանվել դատարանում գործող վարվելակերպի կանոնները, այն է՝ անհարգալից վերաբերմունք է ցուցաբերվել դատարանի նկատմամբ, և դրա հետևանքով խախտվել են Կանոնագրքի 4.1 կետի պահանջները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը՝ լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու հարցը:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով Կորմվել Գրիգորյանիի անձը, կարգապահական խախտման հետևանքները, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, գտնում է, որ վերջինիս նկատմամբ պետք է կիրառել նկատողություն տույժի տեսակը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կրոմվել Գրիգորյանին, (արտոնագիր 305) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի խախտման համար:

2. Փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր 305) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան

06 դեկտեմբերի 2017թ.

Թիվ ԿԳ/117-Ա
ք. Երևան